ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 նոյեմբերի 2016 թվականի N 281-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանով հաստատված հավելվածի 314-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2012 թվականի դեկտեմբերի 3-ի N 517-Ա որոշման N 1 հավելվածի 91-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Վերին Պտղնիի միջնակարգ դպրոց>>, <<Կարենիսի միջնակարգ դպրոց>>, <<Հացավանի Հ. Մանուկյանի անվան միջնակարգ դպրոց>>, <<Ջառի Ժ. Սարգսյանի անվան միջնակարգ դպրոց>>, <<Կապուտանի միջնակարգ դպրոց>>, <<Արտավազի միջնակարգ դպրոց>>, <<Քաղսիի միջնակարգ դպրոց>>, <<Մեղրաձորի Հ. Հակոբյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպություններում իրականացված ներքին աուդիտի արդյունքները՝ **որոշում եմ.**

1. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ *Լ. Նահապետյանին.*

1) <<Վերին Պտղնիի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության 2016 թվականի ֆինանսավորման ծավալներից նվազեցնել 2013 թվականին որպես դրամաշնորհ ավել հատկացված *362492 (երեք հարյուր վաթսուներկու հազար չորս հարյուր իննսուներկու)* ՀՀ դրամը:

2) <<Կարենիսի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության 2016 թվականի ֆինանսավորման ծավալներից նվազեցնել 2013 թվականին որպես դրամաշնորհ ավել հատկացված *183008 (հարյուր ութսունմեկ հազար ութ)* ՀՀ դրամը:

3) <<Հացավանի Հ. Մանուկյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության 2016 թվականի ֆինանսավորման ծավալներից նվազեցնել 2013 թվականին որպես դրամաշնորհ ավել հատկացված *63388 (վաթսուներեք հազար երեք հարյուր ութսունութ)* ՀՀ դրամը:

4) <<Ջառի Ժ. Սարգսյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության 2016 թվականի ֆինանսավորման ծավալներից նվազեցնել 2013 թվականին որպես դրամաշնորհ ավել հատկացված *65184 (վաթսունհինգ հազար հարյուր ութսունչորս)* ՀՀ դրամը:

5) <<Կապուտանի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության 2016 թվականի ֆինանսավորման ծավալներից նվազեցնել 2013 թվականին որպես դրամաշնորհ ավել հատկացված *49584 (քառասունինը հազար հինգ հարյուր ութսունչորս)* ՀՀ դրամը:

6) <<Արտավազի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության 2016 թվականի ֆինանսավորման ծավալներից նվազեցնել 2013 թվականին որպես դրամաշնորհ ավել հատկացված *95050 (իննսունհինգ հազար հիսուն)* ՀՀ դրամը:

7) <<Քաղսիի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության 2016 թվականի ֆինանսավորման ծավալներից նվազեցնել 2013 թվականին որպես դրամաշնորհ ավել հատկացված *249756 (երկու հարյուր քառասունինը հազար յոթ հարյուր հիսունվեց)* ՀՀ դրամը:

8) <<Մեղրաձորի Հ. Հակոբյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության 2016 թվականի ֆինանսավորման ծավալներից նվազեցնել 2013 թվականին որպես դրամաշնորհ ավել հատկացված *270160 (երկու հարյուր յոթանասուն հազար հարյուր վաթսուն)* ՀՀ դրամը:

2. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար *Լ. Պետրոսյանի* վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

2016 թվականի նոյեմբերի 28
ք. Հրազդան